Dillon (Drums, Percussion, Vocals), Mike Duke (Lead and Rhythm Guitar), Lee Lundy (Bass Guitar) come in and complete this great set. Oh, by the way since you will be in a café setting, don't forget the espresso bar.

Admission is \$10 which goes to support our musicians. Tickets can be purchased in advance, advisable since space is limited, by calling Steve Tashjian at 617-930-6105 or Tatoul Badalian at 617-331-0426. Of course for the techno savvy online tickets can be gotten at Merdooncafe.com.

Just to give you heads-up, this summer we are shooting for the stars. Weather permitting; the "jazz nights" will be produced under the stars in our beautiful courtyard. So come on down and settle in.

Adults Learn Computer Secrets

In this Armenian-language class, mysteries like email and the Web are tackled.



By Kelly Corrigan,
Glendale News Press

There is a class at the Glendale Central Library that might not exist if not for Elizabeth Grigorian.

Since 2005, Grigorian, a community outreach coordinator at the library, has taught a free class on computer basics at the library.

At first, Grigorian taught her computer class for seniors in the community before noticing that many of Glendale's Armenian-speaking adults were missing out.

Grigorian arranged to teach the same computer class in Armenian. It took her seven months to translate her 125-page instructional booklet from English to Armenian.

"It was hard work," she said. But that hard work has paid off. Her 12-week class has remained popular. Grigorian estimates that she has taught approximately 800 Armenian-speaking adults basic computer functions and Internet tools.

"They don't miss class unless there's something really bad — something out of their hands," Grigorian said.

At the start of class, Grigorian reviews website addresses that end with .edu, .com., .gov and .org, quizzing the students on which site denotes a commercial business, a non-profit, a government agency or academic institution.

In the beginning of the weekly class, Grigorian helps each student create his or her own e-mail address.

One of Grigorian's teaching techniques is to call on students randomly or ask them to repeat the same information several consecutive times.

The class also visits the Web sites of local and international news organizations.

Using a projector, Grigorian leads the class in a lesson on how one can apply for a job through company websites or online job portals.

Betty Bairamian, a Glendale resident, did not know how to use the

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

* \$50,00 for USA

* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.

* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name:

Address:

City: State:..... Zip Code:.....

Country:

Tel :..... Fax :

ՀԱՐԻՐ ՏԱՐԻ ԱՌԱՋ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ՏԱՍՆԱՄԵԱՅ ԿՆՃՈՒԸ (1910-1920)

ԴՈԿՏ. ԶԱԻԷՆ Ա. ՔԶՆՅ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

Երուսաղեմի Աթոռը Թափուր

Երուսաղեմի հայոց ծերունազարդ Պատրիարք Յարութիւն Արքեպիսկոպոս Վեհապետեան 91 տարիքին կը վախճանէր 1910 Նոյեմբեր 18-ին, եւ Մաղաքիա Արքեպս. Օրմանեան իր «Ազգապատում»-ի Գ հատորի վերջին յօդուածով կը կնքէր Վեհապետեանի վախճանումը որպէս փակուած իր լիակատար գործին: Վախճանումին կը յաջորդէր տասնամեայ կնճիւղ եւ Առաջին Պատերազմին հետեւանքով Թուրք Օսմանեան Կայսրութիւնը կը սպառնար հայոց երկու պատրիարքութեանց գոյութեան՝ Կ. Պոլսոյ եւ Երուսաղեմի, ինչպէս նաեւ Միսի Կաթողիկոսութեան: Օրմանեան Երուսաղեմի մասին յաւելեալ ցանցառ տեղեկութիւններ կը հաղորդէր աւելի ուշ իր «Խոհք եւ Խօսք»-ին մէջ գորգը կը կեանքի վերջին երկու տարիներուն եւ որ լոյս տեսաւ յետ մահու 1929-ին Երուսաղեմի մէջ: Վեհապետեանի վախճանումէն ութ ամիսներ ետք Դանիէլ Եպս. Յակոբեան Տեղապահ ընտրուած էր, որուն պաշտօնավարութիւնը ներքին պայքարի խառնակ շրջանի մը կը հանդիպէր, որուն հետեւանքով ալ չմնաց տեղապահի իր պաշտօնին մէջ:

Կ. Պոլսէն յատուկ պատուիրակութիւն մը Հայկ Խօճասարեանի գլխաւորութեամբ Երուսաղեմ կը հասնէր միաբանական ժողովի գումարման առիթով որ յաջորդ պատրիարքի ընտրութեան համար եօթնանուն ցանկը պիտի քուէարկէր: Ընտրեալները «անարժան կամ անյարմար» անձինք նկատուելով Կ. Պոլսոյ Ազգային Ժողովին կողմէ, ցանկը ետ Երուսաղեմ կը վերադարձուէր ու կը պահանջուէր երեք ամսուան ընթացքին եօթնանուն նոր ցանկ մը պատրաստել ու դրկել Կ. Պոլիս: Հարցը աւելի կը կնճուտէր երբ Պոլսոյ Պատրիարքութիւնը հայ կուսակցութիւններու դիմումին վրայ Երուսաղեմի վանքին համար նոր կանոնագիր մը կը պատրաստէր ու գալն կը վաւերացնէր Խառն Ժողովին: Ժողովին ներկայ էր նաեւ Մաղաքիա Օրմանեան նախկին Պատրիարքը որ հիմնովին կը հակառակէր նոր կանոնագրի մը կազմութեան երբ «հոն ոչ վարչութիւն կար եւ ոչ պատրիարք, եւ այսօր մենք ելեր ենք անոնց համար կանոնագիր կը շինենք: Նախ տազնապը անցունենք, վանքը խաղաղեցնենք, յետոյ ատով կը զբաղինք» առարկելով: Երեսփոխանական ժողովը սակայն իր 1913 Դեկտեմբերի նիստին կը վաւերացնէր գալն:

Ըստ Օրմանեանի, նոր կանոնագիրը «բոլորովին կը նսեմացնէր Երուսաղեմի պատրիարքութեան ներքին ուժն ու հեղինակութիւնը եւ կ'աշխարհականացնէր Աթոռն ալ միաբանութիւնն ալ»: Միաբանութիւնը եւս անշուշտ դժգոհ էր այդ պարտադրանքէն ու իր բողոքի ձայնը գրաւոր կը հասցնէր Կ. Պոլիս: Մայր Աթոռէն Տ.Տ. Գէորգ Ե Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւս Երուսաղեմի միաբանութեան պաշտպան հանդիսանալով, 1914 Փետրուար 14-ի

կոնդակով ապօրինի կը համարէր ամէն քայլ որ կ'առնուէր Երուսաղեմի Պատրիարքութեան թափուր մնացած ատեն, հրահանգելով որ քուէարկուած նոր կանոնագրութիւնը մնար անգործադրելի մինչեւ նոր պատրիարքի ընտրութիւնը: Երուսաղեմ եղած միջոցին Օրմանեան կը հրատարակէր իր 24 էջերէ բաղկացեալ «Դիտողագիր»ը քննադատելով եւ անընդունելի գտնելով իշխեալ կանոնագրութիւնը: Հոն մի առ մի յառաջ բերած է կանոնագրի անպատեհութիւնները ու գալն ցրուած Կ. Պոլսոյ վարչականներուն, միաբանութեան եւ թեմակայներուն: Իր ըսածով «ամէն կողմերէ գնահատուեցաւ Դիտողագիրը եւ իր արդիւնքն ալ ունեցաւ, զի նոր կանոնագիրը այլեւս մոռացութեան մէջ թաղուեցաւ»:

Թուրքիոյ Պետական Միջամտութիւնը

Համաշխարհային Ա Պատերազմի տարին էր եւ Թուրքիա հետամուտ էր քայքայելու հայ հոգեւոր կեդրոնները, Պատրիարքութիւնն ու Միսի Կաթողիկոսութիւնը, անոնց կապը խզելու միտումով Մայր Աթոռէն՝ քաղաքական հաշիւներով: Անոնք պիտի ջնջուէին եւ Սահակ Բ Խապայեան Միսի Կաթողիկոսը իր Աթոռը թողած Երուսաղեմ պիտի փոխադրուէր որպէս Կաթողիկոս-Պատրիարք ծիծաղելի տիտղոս մըն ալ ուսին: Մինչ այդ Պոլսոյ Պատրիարքութեան Խառն Ժողովը Օրմանեան Արքեպիսկոպոս նուիրակ կ'ուղարկէր Երուսաղեմ ներքին խառնակչութիւնները քննելու համար, իր հետ ունենալով իրաւաբան Գէորգ Կիւրեղեան եւ բանաստեղծ Վահան Թէքէեան: Օրմանեան ճիշդ երկու տարի կը մնար Երուսաղեմ՝ 1914 Օգոստոսէն 1916 Օգոստոս, երբ Սահակ Կաթողիկոս եւս կը հասնէր հոն:

Ահմետ ձեմալ փաշան էր որ Սահակ Կաթողիկոսին հետ առանձինն կը տեսակցէր զգուշացնելով զինք որ «չենք ուզեր որ մեր թշնամիին հպատակող կաթողիկոս մը մեր տէրութեան սահմաններուն մէջ ապրող հայերուն հոգեւոր պետը ըլլայ», եւ թէ «կառավարութիւնը որոշած է թրքահայոց հոգեւոր պետը խզել էջմիածնէն», եւ այդ դիտումով այդ նոր պաշտօնը փոխան աքսորեալ Զաւէն Պատրիարքի՝ յանձնելու Սահակ Կաթողիկոսին: Զաւէն Պատրիարքի միեւնոյն ատեն տրուած էր 1916 Յուլիս 28-ի վերջնագիրը հեռանալու Կ. Պոլսէն դէպի իր ծննդավայրը՝ Պաղտաս:

Կաթողիկոսին եւ Օրմանեանի յարաբերութիւնը միշտ ալ լաւ եղած չէր: Երուսաղեմի մէջ Սահակ Կաթողիկոս աննկատ թողուց Օրմանեանի պաշտօնական ներկայութիւնը որպէս պատուիրակ, քանի որ պետական որոշմամբ այլեւս Կ.

Շար.ը էջ 19

APRIL 24th
1915

96th

ARMENIAN GENOCIDE COMMEMORATION

Co-Sponsored by the City of Pasadena, with the participation of all Armenian organizations, churches and schools.

Date: Saturday, April 23, 2011
Time: 10:00am to 12:00 noon

Location: 100 Garfield Ave.
Pasadena Ca, 91101

For additional information please call (626) 399-1799

Everyday Low Prices!

 <p>Grey Goose Vodka 750ml</p> <p>21⁹⁹</p>	 <p>Robert Cavalli Vodka 750ml</p> <p>27⁹⁹</p>	 <p>Russian Standard Vodka 1.75L</p> <p>18⁹⁹</p>	 <p>Ora Vodka 750ml</p> <p>10⁹⁹</p>	 <p>Stolichnaya Russian Vodka 1.75L</p> <p>18⁹⁹</p>
--	--	--	---	---

 <p>Johnnie Walker Blue Label 750ml</p> <p>119⁹⁹</p>	 <p>Chivas Regal 12 Yr. Scotch Whisky 750ml</p> <p>16⁹⁹</p>	 <p>Dewar's 12 Yr. Scotch Whisky 750ml</p> <p>15⁹⁹</p>	 <p>Johnnie Walker Gold Label 750ml</p> <p>52⁹⁹</p>	 <p>Buchanan's 12 Yr. Scotch Whisky 750ml</p> <p>20⁹⁹</p>
---	--	---	--	--

 <p>Corzo Silver Tequila 750ml</p> <p>29⁹⁹</p>	 <p>Avion Silver Tequila 750ml</p> <p>34⁹⁹</p>	 <p>1800 Silver or Reposado 750ml</p> <p>16⁹⁹</p>	 <p>El Charro Silver Tequila 1.0L</p> <p>9⁹⁹</p>	 <p>Corralejo Reposado Tequila 750ml</p> <p>21⁹⁹</p>
--	--	---	--	--

 <p>Remy Martin VSOP Cognac 750ml</p> <p>29⁹⁹</p>	 <p>Hennessy VS Cognac 750ml</p> <p>20⁹⁹</p>	 <p>Tsar Alexander VSOP Cognac 750ml</p> <p>19⁹⁹</p>	 <p>Hennessy VSOP Cognac 750ml</p> <p>32⁹⁹</p>	 <p>Paul Masson VS Brandy 750ml</p> <p>5⁹⁹</p>
---	--	--	--	--

 <p>Grant's Whiskey 1.0L</p> <p>10⁹⁹</p>	 <p>Jack Daniel's Old No. 7 Whiskey 750ml</p> <p>13⁹⁹</p>	 <p>Black Velvet Canadian Whisky 1.75L</p> <p>10⁹⁹</p>	 <p>Rublevka Gold Vodka 750ml</p> <p>17⁹⁹</p>	 <p>Ararat Nairi 20-Yr Brandy 750ml</p> <p>49⁹⁹</p>
--	---	--	---	---



Southern California's Premier Wine & Spirits Superstore

3 LOCATIONS TO SERVE YOU

GLENDALE

825 W. Glenoaks Blvd., Glendale, CA 91202
(818) 242-0683 • Mon-Sat. 9AM-8PM • Sunday 10AM - 4PM

PASADENA

1785 E Washington Blvd., Pasadena, CA 91104
(626) 794-7026 • Mon-Sat. 9AM - 8PM

SHERMAN OAKS

13654 Burbank Blvd., Sherman Oaks, CA 91401
(818) 785-6529 • Mon-Sat. 9AM - 8PM

*This ad expires on 04/23/11 • We reserve the right to limit quantities • Sales tax excluded • Prices subject to change without notice. Ad prices may remain in effect longer than the time period indicated

ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆԴ ԿԵՐԱԲԵՐԵԱԼ ՊԱՐԶ ԲԱՅԼԵՐ՝ ԶԱԲԱՐԱԽՏԻ ԴԵՍ

Գիտէի՞ր թէ կարգ մը համեմատաբար պարզ քայլեր դէմ կը դնեն երկրորդ խմբակի շաքարախտէ տառապելու հաւանականութենէն, որ մեր արդի շրջանակներուն մէջ շատ տարածուած երեւոյթ մը դարձած է: Բժշկական վերջին ուսումնասիրութիւնները այս մէկը նկատած են եւ կը խրատեն հետեւեալները.

- Աւելորդ կշիռ քէդ 5-7 քիլոկրամ պակսեցուր:

- Մնդարար նախաճաշ կատարէ, ինչ որ կէսօրէ առաջուց շրջանին հագեցած կը պահէ քեզի: Նախաճաշը պէտք է բաղկացած ըլլայ զանազան օգտակար եւ որակաւոր տեսականիներէ, ինչպէս լման ցորենով պատրաստուած հաց կամ cornflakes մէկ զաւաթ ճարպէ գուրկ կաթի հետ, կամ թեթեւ ճարպով մածոն պտուղի հետ:

- Երբեմն, ժամանակներու միջեւ, հանգիստ տուր դուն քեզի:

Ելի՛ր գրասեղանիդ ետեւէն կամ համակարգիչին դիմացէն եւ պտրտիր գրասեղանակին կամ տան մէջ: Այս մէկը մկաններուն մէջ արեան շրջանառութիւնը կ'աշխուժացնէ եւ զանոնք աւելի կարող կը դարձնէ՝ ինտելիկն օգտուելու:

- Մինչեւ հիմա վարժութիւն դարձուցած անուշեղէններու սպառողութեան քանակը կէսի նուազեցուր, որովհետեւ անոնք հարուստ են օգտակար չեղող ջերմութեամբ: Առողջութեան եւ վայելչակազմութեան առնչութեամբ շաքարին ունեցած վնասները շատ ծանօթ են բոլորիս:

Խրատ մը.- Անուշեղէնները քիչ քանակութեամբ եւ դանդաղօրէն սպառէ:

- Խորունկ քուն քնացիր մարմնիդ անհրաժեշտ եղող բաւարար ժամերու ընթացքին, որովհետեւ իրողութիւնը յստակ է՝ քրոնիկ դարձած անքնութիւնը կ'ամրապնդէ գիրութեան եւ երկրորդ խմբակի շաքարախտէ տառապելու վտանգները:

րախտէ տառապելու վտանգները:

ՎԱՅԵԼՉԱԿԱԶՄՈՒԹԵԱՆ «ՇԱՔԱՐԸ»

Արդեօք սրճագոյն շաքարի գործածութիւնը վայելչակազմութեան համար աւելի նախնորելի է ճերմակէն:

Սրճագոյն շաքարը ճերմակէն միայն 5 քալորի պակաս է, ինչպէս նաեւ կը պարունակէ քիչ քանակութեամբ հանքային մետաղներ, քալսիում, երկաթ եւ փոթասիում: Զերմութ երու մակարդակով այս քիչ տարբերութիւնը կարելի չէ կարեւոր նկատել վայելչակազմութիւնը պահելու համար: Նախնորելի է, որ այս պզտիկ տարբերութեամբ զբաղելու փոխարէն, նուազեցնել քաղցր ըմպելիներու եւ շաքարով հարուստ եղած տեսականիներու սպառումը:

ՏԱՊԿՈՒԱԾ ԿՈՐԵԿԸ (POPCORN) ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ է ԹԷՎՆԱՍԱԿԱՐ

Popcorn-ը ամէնէն յարմար թեթեւ ուտելիքն է. ան հարուստ է անթիօքսիտանթներով (փոլիֆինոլ նիւթով): Սակայն հարկ է ուշադիր ըլլալ պատրաստութեան համար օգտագործուած ձէթի քանակին, կամ անոր վրայ աւելցուած աղի կամ շաքարի քանակին:

ԱՇԽՈՅԺ ՄԻՏՔ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

Օրուան ընթացքին կը փափաքի՞ս աշխոյժ միտք մը ունենալ, ուրեմն առաւօտեան 200 կրամ վալրի թուրին հետ խառնուած կաթ խմէ, որովհետեւ այս տեսակը հարուստ է ֆլաֆոնոյտ նիւթով, ինչ որ յառաջ կը մղէ ուղեղին երակներու աշխատանքը եւ թոյլ կու տայ, որ յաւելեալ քանակութեամբ արիւն հասնի իրեն:

Այս՝ ուղեղին կեդրոնացման կարողութիւնը 20 առ. հարիւր տոկոսով կը բարելաւէ:

ԽԱՉԻԿ ԴԱՇՏԵՆՑԻ «ՌԱՆՉՊԱՐՆԵՐԻ ԿԱՆՉՈՒՆ»

Շաբունակուած էջ 14-էն

մեռցնեն, կը յաղթեն, կը պարտուին սրբազան նպատակի մը իրագործման ճանապարհին վրայ: Իրենց տարրերը հերոսութիւնն է եւ «Ռանչպարների կանչը» գեղարուեստական տարբերութիւնն ու ասքն է անոնց անձնագոհ ու հայրենանուէր կեանքին, պատմուած՝ հոգիով մեծ գրագէտի մը ներշնչումով, սրտի բաբախով, ոգեւորող անկեղծութեամբ, հերոսապաշտութեամբ, տաք շունչով եւ հայրենակիրգով:

Այս տուեալներուն մէկտեղումով է, որ գրագէտ խաչիկ Դաշտենց յաջողած է գեղարուեստական մարմնաւորում տալ կեանքի մէջ իրենց հերոսութիւնը նուաճած իր հերոսներուն: Ռանչպարներուն, որոնք հաւատաւոր ջերմեռանդութեամբ կառչած իրենց հող եւ ջուրին, արտ

ու կալին, լեռ ու ձորին կ'երագեն հաշտ ու խաղաղ ապրիլ իրենց աշխատանքին արդար եւ քրտնաթոր վաստակով: Բռնութիւնն ու մարդկային արժապատուութեան ոտնահարումն է, որ կը ստիպէ բահ ու բրիչին, մանգաղին տեղ, կամ անոնց ախամայ լքումով ձեռք առնել գէն ու գրահ՝ պաշտպանելու համար մարդկային ու ազգային իրաւունքներ: Այսպիսին են խաչիկ Դաշտենցի ռանչպարները: Անոնց կանչը հողին ձայնն է, կեղեքող գիւղացիին զայրացած ճիչը: Գրագէտ խաչիկ Դաշտենց այդ ձայնին եւ ճիչին ունկնդիր՝ հաւատարմօրէն ձայնագրած է ռանչպարներու կանչը, որպէսզի ան կորսուած պատմական հայրենիքի անսպառ կարօտով, միացող երազանքով եւ յուսալից սպասումներով արձագանգէ ամէն հայրենակէզ հայու հոգիէն ներս...:

ԲԱՐԱՅՐԸ

Շաբունակուած էջ 14-էն

երբ իմացայ, որ ինձ ծեծող ոսկրոտ դիմագծերով եւ փոքրիկ մօրուսով այդ մարդը այն միեւնոյն շինական Արմենակն էր, որից ես մի տուփ ծխախոտ էի վերցրել դրանից մի քանի տարի առաջ Կարմիր Մառզնալիս: Նրա փոյթը չէր բնաւ, որ ես բանտ էի նստել կամ կեանքս վտանգի տալով Անդրանիկի ձին փախցրել էի վանքի շրջապատումից:

Իմ անգոյշ շարժումով ես արձագանգել էի անձանօթ կնոջ կանչին, երբ նոր էի երդուել սրի, աւետարանի եւ խաչի վրայ, որի համար էլ նա ինձ ենթարկել էր անողորմ պատժի:

Եւ նա ինձ պատժել էր այն միեւնոյն գաւազանով, որ իմ ներկայութեամբ պոկել էր իրենց անտառի կարմրածառից, որի ամուր փայտից մեր նախնիները հին ժամանակներում նետեր էին շինել ինքնապաշտպանութեան համար:

Չեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 F: (626) 797-6863
massis2@earthlink.net

AMERICAN RELIABLE WINDOWS

Beautifully while increasing the value of your home with elegant, 18 months no interest* Financing O.A.C

ENERGY EFFICIENT WINDOW AND DOORS.

Vinyl, Wood, Fiberglass, Clad or Aluminum Replacement, Retro or New Construction

Our Windows Qualify For Tax Credits

Manufacturers rebates & deep discounts available NOW. Product, Pricing and Financing to meet any Budget.

888-804-7250
Your Satisfaction is Guaranteed.

www.americanreliablewindows.com

\$89 Rebate*
Rebate Example:
5 windows = \$445
10 windows = \$890
15 windows = \$1335

Serving Los Angeles, Ventura, Orange, & San Bernardino Counties

Licensed • Certified • Insured CSLB LIC#901591

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ՃԱՆԱԶԱԵԼ, ԼՂՀ-Ի, ՕՍԵԹՅԱՅԻ ԵՒ ԱԲԽԱԶԻԱՅԻ ԱՆԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Ուրեմն խնդիրը կայանում է նրանում, որ Հարավային Կովկասում նախ պետք է կարգադրել առկա 8 քաղաքական եւ ռազմական կոնֆլիկտները եւ նոր միայն ծրագրել նրա միջազգային տնտեսական ինտեգրումը: Հնարաւոր է արդեօք: Այո, եթէ Հարավային Կովկասում ազգային, ռազմավարական, աշխարհաքաղաքական շահեր հետապնդող գերտէրութիւնները, միջազգային կառուցները կարողանան համադրել, ի մի բերել իրենց շահերը, որպէս նպատակակէտ ունենալով տարածաշրջանում արդար եւ յարատեւ խաղաղութիւն հաստատելը, ոչ թէ սեփական շահի ապահովումը: Յաւոք, պետք է նշեմ, որ այս ուղին, այսօր մերժուած է:

«Կովկասի անվտանգութեան ինձ համար ընդունելի բանաձեւը հաստատուն խաղաղութեան կերտումն է՝ հիմնուած գոյութիւն ունեցող շահերի համադրման եւ մեր ժողովուրդների դաւանած արժէքների վրայ՝ ապրելու ու արարելու, բռնութեան բացառման, մարդասիրութեան արժէքների վրայաստիչ է ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանը ելույթ ունենալով Մեծ Բրիտանիայի միջազգային յարաբերութիւնների թագաւորական ինստիտուտում:

Անհասկանալի է երբ հեղինակաւոր կառուցների, առաջատար պետութիւնների ղեկավարները, խօսելով հարակովկասեան հակամարտութիւնների կարգաւորման մասին պնդում են տարածքային ամբողջութեան պահպանման պահանջը: Ոչ ոքն էլ են ազատութիւնից, ժողովրդավարութիւնից, արդարութիւնից, մարդու իրաւունքներից եւ պնդում Սթալինի հաստատած սահմանների անփոփոխելիութիւնը, սահմաններ, ինչի արդիւնքում Ատրպէյճանին են բռնակցուել հայաբնակ Ղարաբաղը եւ Նախիջեւանը, Հարավային Լեզգիստանը եւ Թալիշտանը: Վրաստանին են «տրուել» Աբխազիան, Աճարիան, Հարավային Օսեթիան, Հայաբնակ Ջաւախքը եւ ատրպէյճանաբնակ Բորչալուն: Մէկ անձի ընդունած այդ որոշումներն են, որ դարձան արիւնհակ, քայքայիչ հակամարտութիւնների պատճառ: 3000-ից աւել զոհեր, 3-4 մլն գաղթականներ, մօտ 200 աւերուած բնակավայրեր, 10000-ից աւել հաշմանդամներ: Կարելի է արդեօք օբեկտիւ եւ հեռանկարային համարել ներկայացուած առաջարկները, եթէ դրանց հիմքում դրուած է սթալինեան սահմանների անձեռնմխելիութեան պնդումը: Ի հարկէ ոչ: Դա միայն հիասթափութիւն, անվստահութիւն եւ զարմանք է առաջացնում այդ առաջարկութիւնների մշակողների ու ներկայացնողների հանդէպ, քանզի ակնյայտ է, որ այդ ճանապարհով կարելի է հասնել միայն նոր պատերազմի, այն էլ շատ աւելի արիւնհակ եւ լայնածաւալ, քան նախկինը, բայց ոչ խաղաղութեան:

Ակներեւ է դարաւոր մի տիտուր եւ անարդար օրինազափութիւն՝ հայերի հաշուին ապահովել միլիաների շահերը: Մօտ 200 տարի առաջ հայերը ստիպուած էին թողնել հայրենի կարիւնը եւ գաղթել Ռուսաստան: Որոշեցին, որ հայրենագրելով հայերին եւ տարածք-

ները յանձնելով Թուրքիային, կ'ապահովեն հայերի անվտանգութիւնը: Մօտ 30 տարի տեւած, թուրքերի կողմից իրականացուած բնաջնջումը, սպանդը, թալանը աւարտուեց 1923-ին Արեւմտեան Հայաստանի հայութեան ոչնչացումը եւ հայրենագրկամբ: Տարածքները, հարստութիւնը մնաց թուրքիային, գաղթականի թշուառ կեանքը ու անդառնալի կորուստներից ցաւը՝ հայերին: Աշխարհի հզորները այսօր Թուրքիային, նույնիսկ Գեղասպանութեան ճանաչումից են փորձում ազատել: Հայութեանը պատկանող տարածքների օկուպացման, փոխհատուցման, մի ամբողջ ազգի հայրենագրկման մասին չեն էլ խօսում: Բայց չէ՞ որ Գեղասպանութիւնը եւ տեղահանումը իրականացուել է հայերին պատկանող հողը գրաւելու, օկուպացնելու համար: 23 տարի առաջ, Ատրպէյճանը սկսեց էլ աւելի գազանային, գազրելի գործողութիւններ հայութեան դէմ, քան Թուրքիայում 100 տարի առաջ էր: Նպատակը նոյնն էր՝ սպանելու, թալանելու, տեղահանելու միջոցով գաւթել հայերին պատկանող հողը եւ ունեցուածքը: Սանձազերծուեց ռասիստական, գաւթողական պատերազմ հայութեան դէմ: Ատրպէյճանի գիւղերում, քաղաքներում մորթում, այրում, բռնաբարում էին հայերին եւ Մոսկուան որոշեց արտակարգ դրութիւն մտցնել Հայաստանում: Դէ արի ու մի խենթանայ: Շնորհիւ հայութեան միասնութեան, արցախցու մարտունակութեան, հայրենասիրութեան եւ իսկախութեան Կարպէյճանը կարողացաւ սկսուեց գաւեշտների նոր շարք: Թուրքիան շրջափակում է Հայաստանին արդէն 18 տարի: Հայաստանը մեկուսացւում է միջազգային տնտեսական ինտեգրացիոն ծրագրերից նորից թուրքիայի ջանքերով: Աշխարհի հզորները ԱՄՆ-ի գլխաւորութեամբ ձգտում են վերականգնել Ատրպէյճանի սթալինեան տարածքային ամբողջականութիւնը, ստիպելով հայերին մոռանալ պատերազմը, նրա արդիւնքները, բոլոր միջազգային կառուցների եւ նոյնիսկ համանախագահող երկրների կողմից մոռացութեան մատնուած 600 հազար ատրպէյճանահայ փախստականներին: ԵԱՀԿ նախագահը հասել այնտեղ, որ ԼՂՀ-ին առաջարկել է միակողմանի հետ կապ հաստատել, կարծես թէ դաշտը մաքրում է ատրպէյճանցի դիպուկահարների համար: Իսկ Թուրքիայի արտգործնախարար Ա.Տաւուսօղլուն «Ռասիա Ի Կլոպալնիա Փոլիթիքա» ամսագրի իր յօդուածում գրում է «Հայաստանի կողմից ատրպէյճանական հողերի գաւթումը, ինչը դարձել է Լեւոնային Ղարաբաղի շուրջ հակամարտութեան պատճառ, դժուարացրել է յետագայ համագործակցութիւնը տարածաշրջանային եւ համաշխարհային մասշտաբով»: Ես հեռու եմ այն մտքից, որ Տաւուսօղլուն ուսեալ դիւանագէտ չի: Բայց 3 նախագահութեան մէջ երկու սխալը արդեօք շատ չի ուսեալի համար: Ատրպէյճանական բանակին, այդ հողերից նահանջ է պարտադրել Ղարաբաղի ինքնապաշտպանական բանակը, ոչ թէ Հայաստանը ու դա տեղի ունեցել Մոսկուայից 6 տարի, ԼՂԻՄ- ին

ինքնավարութիւնից գրկելուց 5 տարի յետոյ:
Այնուամենայնիւ, դարեր շարունակ հալածուելով ու զնալով շարունակական կորուստների ճանապարհով հայութեանը յաջողուել է Արեւելեան Հայաստանի տարածքում ստեղծել Հարավային Կովկասի, համեմատաբար, ամենակայուն միակորը: Ամփոփելով խօսքս, հրաւիրում եմ ձեր ուշադրութիւնը հետեւեալի վրայ:
1. Հարավային Կովկասում կայուն, անվտանգ եւ խաղաղ իրավիճակը նախ եւ առաջ անհրաժեշտ է այստեղ ապրող ազգերին: Ոչ հայ, ոչ վրացի, ոչ ատրպէյճանցի ժողովուրդները պատերազմ չեն ուզում: Մենք տեսել ենք պատերազմի դիշտից դէմքը եւ խաղաղութիւնը համարում ենք բարձրագոյն արժէք: Բայց հարակովկասեան ազգերը արժանապատուութիւնը դատում են աւելի բարձր, քան մշտապէս կուշտ լինելը: Հետեւաբար, ուժի միջոցով անարդար լուծում պարտադրելու դէպքում, կայունութեան եւ խաղաղութեան մասին պետք է մոռանալ: խաղաղութեան հասնելու պարտադիր պայմաններից էն. ԼՂՀ-ի, Աբխազիայի, Հարավօսեթիայի, անկախութիւնը ճանաչելը, Ջաւախքին, Հարավային Լեզգիստանին, Թալիշտանին, Պորչալուն ինքնավարութիւն տալն է:
2. Գոյութիւն ունեցող ստատուս-քունտ պետք է պահպանուի այնքան քանի դեռ չի նախապատրաստուել եւ հաստենացուի առկա բոլոր խնդիրների համալիր կարգաւորման, իրատեսական, նախահամաձայնեցուած ծրագիրը: Յանկացած հատուածային պարտադրուած, անարդար լուծում կարող է պայթեցնել ողջ տարածաշրջանը:
3. 17 տարի պահպանուող շարաբերական խաղաղութեան համար մենք պարտական ենք Ռուսաստանին: Ռուսական ռազմական բազայի առկայութիւնը Հայաստանում կարողացել է զսպել եւ չեզոքացնել տարածաշրջանի ամենառազմատենչ երկու ուժերի՝ Թուրքիայի եւ Ատրպէյճանի վտանգաւոր նկրտումները: Ռուսաստանի դուրս մղումը տարածաշրջանից կ'ունենայ անկանխատեսելի վտանգաւոր հետեւանքներ:
4. Հարակովկասեան երկրներում հաստատուած, քաղաքական, տնտեսական կառավարման համակարգերը ներդրուել են Եւրոպայից եւ ԱՄՆ-ից, նպաստակարարմարտութիւնը հիմնաւորող հետագոտութիւնների բացակայութեան պայմաններում: Այսօր ակնյայտ է, որ լիպերալուկայական համակարգը չի կայացել, վարկաբեկուել եւ դարձել է սոցիալական ծայրաստիճան բեւեռացման, խորը աղքատութեան, միլիոնաւոր մարդկանց արտագաղթի, հրէշաւոր չափերի հասնող կորուպցիայի եւ համատարած գործազրկութեան պատճառ:
5. Եւրոպան որդեգրել է մի սկզբունք (այդպիսի կարծիք է ստեղծուած), որ հակամարտող կողմերի իշխանութիւնները ինչքան շատ խնդիրներ ունենան երկրի ներսում, այնքան հեշտ կը լինի արտաքին ճնշման միջոցով նրանց գիշումներ պարտադրելը: Հիմնովին սխալ մարտավարութիւն է եւ

գործում է խաղաղութեան հասնելու դէմ:
6. Միջազգային կառուցները, կամ միտումնաւոր աչք են փակում, կամ կոպիտ սխալ են թոյլ տալիս անտեսելով ամենավտանգաւոր պոտենցիալ կոնֆլիկտի օճախի գոյութիւնը Հարավային Կովկասում: Դա, այսօր արդէն ամբողջովին հայաթափուած Նախիջեւանն է: Թուրքիայի նախագահ Կիւլը ասում է՝ «Նախիջեւանը հարագատ ու թանկարժէք է եւ Ատրպէյճանի, եւ Թուրքիայի համար: Նախիջեւանը Թուրքիայի համար ունի վիթխարի նշանակութիւն: Ֆիզիքական առումով Նախիջեւանեան տարածաշրջանում Թուրքիայի ու Ատրպէյճանի սահմանը փոքր է, սակայն քաղաքական առումով 10-12 քիլոմետր երկարութեամբ սահմանն ունի ծայրայեղ կարեւորութիւն: Մեր այս սահմանը հանդիսանում է շատ խորհրդանշական անցում, որն աշխարհագրորէն Թուրքիան կապում է Թուրքալեւան երկրների հետ»: 2005 թուականին Թուրքիան իրանին առաջարկեց փակ համաձայագիր կնքել Նախիջեւանում դերերի բաշխման մասին, սակայն իրանը կտրուկ մերժեց դա՝ ելնելով նրանից, որ Նախիջեւանը պատկանում է Ատրպէյճանին: Այնուամենայնիւ, Թուրքիան կառուցում է 129 կմ Իգդիր-Նախիջեւան երկաթուղի, այն դէպքում երբ Թուրքիային Նախիջեւանի հետ կապող երկաթուղի վաղուց կայ, բայց անցնում է Հայաստանով: Նախատեսւում է կառուցել նաեւ Իգդիր-Նախիջեւան գազամուղ այն դէպքում երբ Նախիջեւանը լիովին ապահովուած է իրանական գազով: «Ատրպէյճանի հետ սահմաններ չունեցող Նախիջեւանը մնացել է միայնակ Հայաստանից բխող անվտանգութեան սպառնալիքների հանդէպ: Այդ սպառնալիքի չեզոքացման համար մեր երկրների միջեւ յարաբերութիւններում շատ կարեւոր է համարուում ռազմական համագործակցութիւն Ատրպէյճանի ու Նախիջեւանի հետ», յայտարարում է Թուրքիայի ԱԳՆ-ն առանձին եւ հաւասար հարթութիւնների վրայ դնելով ռազմական համագործակցութիւնը Ատրպէյճանի եւ Նախիջեւանի հետ: Ու՞մ դէմ է օգտագործելու Թուրքիան ռազմականացուած Նախիջեւանը՝ Հայաստանի, իրանի թէ՞ Ռուսաստանի:
7. Հարակովկասեան անկայունութեան կարեւորագոյն պատճառներից մէկը չկարգաւորուած հայթրքական յարաբերութիւններն են: Աւելորդ չի մէկ անգամ եւս շեշտել, որ Ղարաբաղ-Ատրպէյճան քաղաքական վեճը ռազմական հակամարտութեան վերածելու հեղինակը եղել է Թուրքիան: Հայ-թրքական յարաբերութիւնները կարող են կարգաւորուել միայն Թուրքիայի կողմից Գեղասպանութիւնը ընդունելուց եւ վիսանների հատուցման պարտաւորութիւնը ստանձնելուց յետոյ: Յանկացած այլ լուծում ոչ միայն ժամանակաւոր, այլեւ ապակայունացնող կը լինի:
Շնորհակալ եմ այս կարեւոր քննարկման կազմակերպչներին: Յաջողութիւն եմ մաղթում բոլոր նրանց, ովքեր ձգտում են հասնել իրական, արդար խաղաղութեան հաստատմանը Հարավային Կովկասում:

ՏԵՐ ԶՕՐԵՆ ՄԻՆՉԵՒ ԾԻԾԵՆԱԿԱԲԵՐԴ

Մարունակուած էջ 1-էն

Թեան Ամպիրոնի վարիչ՝ Արդի Հայոց Պատմութեան մէջ, ինչպէս նաեւ հեղինակը աւելի քան քսան հատորներու, առանց հաշուելու իր խմբագրած կամ մասնակցած տասի շուրջ հատորները հայկական պատմական քաղաքներու եւ շրջաններու մասին:

Դոկտ Փամելա Մթաթըր - Հարվըրտ Համալսարանէն, ծոռը՝ 1915ին թուրքիոյ մէջ ԱՄՆի դեսպան շէնրի Մորկընի մասին:

Գլխաւոր բանախօս Հասան ձեմալ իր խօսքն սկսաւ հայերէնով՝ «Բարեւ, յարգելի բարեկամներ»:

Ելոյթի գաղափարներու գէթ մասնակի հետեւեալ ուրուագիծերը կու տանք իր՝ առաջին դէմքով.

Յարգելի բարեկամներ, ինձ համար հեշտ պիտի չըլլայ այսօր խօսիլ ձեզ հետ: Նոր լեզուի մը պէտք ունինք՝ հաղորդակցելու համար իրար հետ: Այս խնդրին մէջ թերեւս դուք կարենաք օգնել ինձի: Մենք իրարու շատոնց ծանօթ ենք արդէն, քանի նոյն հողերու ծնունդն ենք: Ես ձեզի ողջուններ կը բերեմ ձեր նախահայրերու երկրէն: Եկած եմ խօսակցութիւն մը բանալու ձեզ հետ, յատկապէս հայ երիտասարդներուն հետ: Ես չեմ եկած կեղծելու, ձեւացնելու կամ դերասանութիւն ընելու, այլ իմ սիրտէս մտերմօրէն խօսելու ձեզ հետ - այնպէս՝ ինչպէս դեռ քանի մը տարի առաջ խօսած եմ իմ ողբացեալ բարեկամ Հրանդ Տիւնքիւն, որուն հետ պայքարի ընկերներ եղած ենք:

Ես կը ճանչնամ ձեր ցաւը, Մեծ Եղեռնի անամոքելի վիշտը: Ամենին ամօթալի պայմաններու տակ, հայ ժողովուրդը, դարերով ապրած իր հողերէն արմատախիլ եղաւ, բռնի տեղահանուեցաւ եւ անապատները քրուեցաւ՝ այնտեղ հարիւր հազարներով անգթօրէն բնաջնջուելու համար:

Ինչպէս ամբողջ թուրքիոյ տարածքին, մեր տան մէջ եւս անգիր օրէնք էր ամբողջական լուռութիւնը 1915ի ողբերգութիւններու մասին: Երբ որեւէ մէկը հարց տար թէ ինչո՞ւ չեն խօսիր հայերու դէմ կատարուած այդ ոճիրներու մասին, մեզի կ'ըսուէր թէ աւելի լաւ է լուել, քան թէ թշնամանքի առիթ տալ: Այսպէս, 1915էն ետք, Մեծ Եղեռնի շուրջ պարտադիր լուռութիւնը ամբողջ թուրքիոյ մէջ ձեռք-ձեռքի կ'ընթանար ոճիրի ուրացման հետ: Ուրացումը կը շարունակուի պաշտօնապէս մինչեւ այսօր: Սակայն 20րդ դարու վերջին քառորդին արդէն սկսան հասարակութեան հարցադրումները թուրքիոյ պաշտօնականացած սուտերուն դէմ: Դեռ 1970ականներուն սկսան լոյս տեսնել իշխանութիւններու պատմական կեղծ մեկնաբանութիւնները խարանող խիզախ գիրքերը Ռէյճիբ Աւրաքոյուլի հրատարակչատունէն:

Անձնագոհ աշխատանքները իրենց պտուղը տուին, եւ դարձակէտը սկսաւ 1980ականներուն: Կրնանք 1990ականները նկատել սուտերու վերջը եւ ճշմարիտ խօսքի սկիզբը: Թուրք դեմոկրատական շարժման առւնթեր, Հրանդ Տիւնքի Ակօս օրաթերթը 1996ին դարձաւ ջահակիրը ճշմարտութեան այս զարթօնքին: Վերելքի բարձրակէտին էր որ, 2007ին, գործուեցաւ Հրանդ Տիւնքի սպանութեան ոճիրը: Իր յուղարկուելութեան, աւելի քան

հարիւր հազար թուրքեր միացան հայերուն՝ «Մենք բոլորս հայեր ենք, ամէնքս Հրանդ Տիւնք ենք» կարգախօսին տակ: Հակառակ իշխանութեան գործադրած բոլոր ճնշումներուն, 2000ին սկսուած Եւրամիութիւնն անդամակցելու թրքական դիմումը առիթ տուաւ որ նոր թափ ստանան Մեծ Եղեռնի մասին ճծմարտութիւնը բացառուող պահանջները: Ես յուսաիւր եմ Եւրամիութիւնէն, մանաւանդ անոնց կողմ հակամահմետական կեցուածքէն: Բայց նոյն ատեն կողմնակից եմ թուրքիոյ Եւրամիութիւնն անդամակցելուն, քանի այնտեղ միջնորդող աւելի դեմոկրատական է եւ օգտակար՝ թուրքիոյ առողջ զարգացման համար:

Դանդաղ բայց հաստատ ճամբայ մը կտրած ենք 24 Ապրիլ 1915ին ասդին: Միլլիէթ օրաթերթի 5 Հոկտեմբեր 2008ի համարով հրատարակուած իմ գրութեամբ ես գիտակցած ու յայտարարած եմ թէ իմ զգացումներս կը տարբերին մեծ հօրս՝ ձեմալ Փաշայի հայեացքներէն, եւ ես զինք քաղաքականօրէն պատասխանատու կը գտնեմ հայերուն դէմ 1915ին գործուած Մեծ Եղեռնին համար: Այս զգացումներուն պոռթկումովն էր որ Սեպտեմբեր 2008ին Երեւանի մէջ այցելեցի Ծիծեռնակաբերդի Յուշակոթողը եւ երեք մեխակներ գետեղեցի այնտեղ:

Թուրքիան՝ իր պետութիւնը չէ միայն: Ներկայիս արմատական փոփոխութիւններու ընթացքի մը մէջ է թուրք ժողովուրդը, քաղաքացիական հասարակութիւնը: Մօտ երեսուն հազար թուրքեր վերջերս ստորագրեցին այն փաստաթուղթին տակ որով ներողութիւն կը խնդրեն հայերէն՝ անոնց դէմ գործուած ոճիրին համար: Անկարելի է մոռնալ կամ ուրանալ պատմութիւնը: Արմատները չեն կորսուիր: Զանոնք պահած հողը չի մոռցուիր:

Որպէս գրողակից, Դոկտ Փամելա Մթաթըր ողջունեց գլխաւոր բանախօսը իբր մարդ ու մտաւորական: Ան հարց տուաւ թէ արդեօ՞ք իրերհասակացողութիւնը կարելի է հայոց եւ թուրքերու միջեւ՝ 1915էն ետք: Դժուար է գործընթացը, ըսաւ ան, բայց այս հակադրութեան (conflict) լուծումը կը սկսի՝ մօտէն իմանալով թէ ի՞նչ պատահեցաւ: Պատասխանելով ունկնդրի մը հարցման թէ ինչո՞ւ խուսափեցաւ Յեղասպանութիւնը բառի գործածութենէն, ան ըսաւ թէ իր դերն է՝ կողմերը իրարու քով բերել եւ ոչ թէ կողմ բռնել:

Դարձեալ որպէս գրողակից, Փրոֆ Ռիչըրտ Յովհաննիսեան, գնահատելով հանդերձ կարեկցանքի արտայայտութիւններն ու եղածին համար ներողութեան խնդրանքները, շեշտեց թէ գործնական գետնի վրայ գրեթէ ոչինչ փոխուած է թուրքիոյ ուրացումի քաղաքականութեան մէջ: Ան ըսաւ թէ թուրքիոյ կողմէ անհրաժեշտ է ոչ միայն Յեղասպանութեան ճանաչումը, այլ նաեւ - մանաւանդ - արդար հատուցման պատրաստակամութիւնը: Յարգելի փրոֆեսորին ձայնը յոգնութիւն եւ տիրութիւն կ'արտայայտէր: Յուսաիւր եւ քաղաքականութեան մեքենայութիւններէն ուղղակի զգուած կ'երեւար երբ, հարցման մը պատասխանելով, դառնորէն հաստատեց թէ այսօր թուրքիայէն մեր սպասածը պարզապէս մեր պահանջներու նուազագոյն բաւարարում (conciliation) մըն է,



քանի ներկայիս ամբողջական համաձայնութեան կամ դիրքորոշումներու հաշտեցման (reconciliation) խաբկանքներ չունինք այլեւս:

Անտարակոյս շինիչ եւ օգտակար նախաձեռնութիւն մըն էր այս բազմաձայն գրոցը, որուն համար սրտանց կը շնորհակարանք ՀԲԸՄը եւ իր Ասպետները: Նոյն ատեն, հոս կ'ուզենք արձանագրել կարգ մը բարեկամական նկատողութիւններ ու թելադրութիւններ՝ այն նախանձախնդրութեամբ որ նման ձեռնարկներ աւելի լաւ ծառայեն իրենց նպատակին:

1. Հասան ձեմալ անկաշկանդ եւ անկեղծօրէն արտայայտեց իր կեցուածքը օրուայ թեմային վերաբերեալ: Միւս կողմէ, Փրոֆ Ռիչըրտ Յովհաննիսեան, այդ երեկոյ իրեն տրուած ժամկէտով ու հանգամանքով (որպէս discussant, այսինքն գրողակից, եւ ոչ որպէս գրողակցի) ինչպէս օրուայ պրոշիւրին մէջ թարգմանուած է սխալմամբ), ուրուագծեց տիրող հայ մտածողութեան ընդհանուր ուղղութիւնը: Կը խորհինք թէ հայկական կողմին բաւարար առիթ չտրուեցաւ արտայայտուելու: Ասիկա որեւէ կերպով քննադատութիւն մը չէ վաստակաշատ յարգելի փրոֆեսորի հասցէին, այլ ամբողջութեամբ կ'առնչուի երեկոյի յայտագրի ձեւաչափին (format) հետ: Այսպիսի առիթով, ուր թրքական կողմի ներկայացուցիչը սպառնչեց անդակութեամբ հանրութեան կը ներկայացնէ իր - թէկուզ ազատամիտ եւ յառաջդէմ - տեսակէտը, արդար ու խոհեմ պիտի ըլլար որ նոյնատեսակ ամբողջականութեամբ եւ հանդիսաւորութեամբ ներկայացուէր նաեւ հայկական կողմը: Ի վերջոյ, չմոռնանք թէ Պրն ձեմալի ինքնին անկեղծ ելոյթը, առարկայական գետնի վրայ, ներողութեան խնդրանքի (apologies) սահմանէն դուրս չելաւ - եւ մենք դարձեալ սպասողի կրաւորական-պաշպանողական դիրքին մէջ մնացինք:

2. Ընթերցողներուն կողմէ բանախօսներուն ուղղուած գրաւոր շարք մը կարեւոր հարցումներ աննկատ մնացին - ներառեալ Մասիս Շաբաթաթերթի խմբագրական կազմին կողմէ երկու խորքային հարցումներ: Միւս կողմէ, բազմաթիւ հապճեպ ու նոյնատիպ հարցումներ յաջորդաբար ընթերցուեցան, որոնց կրկնուող պատասխանն էր թէ արդէն հարցուած ու պատասխանուած էին: Հարցումներու աւելի աչալուրջ ընտրութիւն մը պիտի աշխուժացնէր եւ արժեւորէր երեկոյն:

3. Մենք ցաւալի եւ հակադատարարակցական գտանք մեծաթիւ հայ աշակերտներու սրահէն հանուիր եւ գրկուիր օրուայ բանախօսութենէն, քննարկումներէն եւ ազգային հրատապ հարցերու շուրջ կարծիքներու փոխանակումէն: Այս ձեռնարկը առաւելաբար մեր պատանիներուն, աշակերտութեան եւ ուսանողութեան հասցեագրուած էր - նոյնինքն գլխաւոր բանախօսին իսկ արտայայտութեամբ: Սրահին յառաջամասի աթոռները պէտք էր գրաւէին անոնք: Մեղք որ տարբեր նախապատուութիւններ ունէին երեկոյի կազմակերպիչները:

ՔԱՉ ՆԱԶԱՐ ՈՒՂԻՎ ԵԹԵՐ ՇՕ Ամեն Կիրակի երեկոյեան ժամը 10:00-ից 12:30 Կլէնտէյլի 380-րդ կայանից

REQUEST FOR PROPOSALS (RFP# 7543) PROGRAM/PROJECT MANAGEMENT SERVICES
The Housing Authority of the City of Los Angeles invites proposals from qualified firms interested in providing Program/Project Management Services. Copies of the RFP may be obtained beginning March 21, 2011 online at www.hacla.org/ps. Proposals will be accepted until 2:00 P.M., April 22, 2011.
3/31, 4/7/11 CNS-2064163# MASSIS WEEKLY

REQUEST FOR PROPOSALS (RFP# 7546) OFFICE RELOCATION & RECONFIGURATION
The Housing Authority of the City of Los Angeles invites proposals from qualified firms interested in providing Office Relocation & Reconfiguration Services. Copies of the RFP may be obtained beginning March 21, 2011 online at www.hacla.org/ps. Proposals will be accepted until 2:00 P.M., April 11, 2011.
3/31, 4/7/11 CNS-2065417# MASSIS WEEKLY

ՀՈՒՆԱՀՈՒՍԵԱԿԱՆ ՈՃԻ ԸՄԲՇԱՍԱՐՏԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱԲԱԿԱՆԸ ԳՐԱԿԵՑ ԵՐԿՐՈՐԴ ՏԵՂԸ ՌՈՍԱՆ ԱՍՈՅԵԱՆԸ՝ ԵՒՐՈՊԱՅԻ ԱԽՈՅԵԱՆ

Գերմանիայի Դորտմունդ քաղաքում աւարտուեց ըմբշարարության եւրոպայի առաջնութիւնը: Առաջին երկու օրերին գորգ դուրս եկան տղամարդկանց ազատ ոճի ըմբշները, որոնց պայքարի արդիւնքում Հայաստանի հաւաքականը զբաղեցրեց 6-րդ հորիզոնականը:



Այս ոճում Հայաստանի հաւաքականի միակ մետալը նուաճեց Մուսա Մուրթազալիեւը, ով եզրափակիչում պարտուեց ռուս Դենիս Յարգուշին: Ազատ ոճի թիմային պայքարում յաղթող ճանաչուեց Ռուսաստանի հաւաքականը՝ 4 ոսկէ, 1 արծաթէ, 1 պրոնզէ մետալ: Երկրորդ տեղը զբաղեցրեց Ատրպէյճանի հաւաքականը՝ 2 ոսկէ, 3 պրոնզէ մետալներով: Երրորդը՝ 1 ոսկէ մետալով Թուրքիայի հաւաքականն էր:

Յունահունգարական ոճի ըմբշներին պայքարում Հայաստանի ընտրանին զբաղեցրեց 2-րդ հորիզոնականը՝ գիշերով միայն ռուսներին: Հայաստանի հաւաքականի կազմում մետալներ նուաճեցին՝ Ռոման Ամոյեանը՝ ոսկէ (55 կգ.), Արթուր Ալեքսանեանը՝ արծաթէ (96 կգ.), Եուրի Պատրիկեւը՝ պրոնզէ (120 կգ) եւ Արսէն Ջուլֆայակեանը՝ պրոնզէ (74 կգ):

Ռոման Ամոյեանը կիսեզրափակիչում աստիճանացի էջանիս Ազիզլիին յաղթելուց յետոյ, եզրափակիչում պարտութեան մատնեց

Ուքրաինայի ներկայացուցիչ Վուդար Ռագիմովին եւ հուզակուեց Եւրոպայի ախոյեան:

Յունահունգարական ոճի 55 կգ. քաշային կարգում հանդէս եկող հայ ըմբշը մինչեւ կիսեզրափակիչ գոտեմարտը նախ 1/16 եզրափակիչում առաւելութեան հասաւ լիտվացի Ռամանուս Դադիսի նկատմամբ, այնուհետեւ 1/8 եզրափակչում պարտութեան մատնեց վրացի Լաշա Գոգիտաձէին: Քառորդ եզրափակչում Ռոմանը յաղթեց ռուս Վալերի Բորզոյակովին:

Յունահունգարական ոճի ըմբշամարտի Եւրոպայի առաջնութեան թիմային պայքարում առաջին ետեակին ունի հետեւեալ տեսքը.

1. Ռուսաստան՝ 2 ոսկէ, 1 արծաթէ, 1 պրոնզէ մետալ:
2. Հայաստան՝ 1 ոսկէ, 1 արծաթէ, 2 պրոնզէ մետալ:
3. Ուքրաինա՝ 1 ոսկէ, 1 արծաթէ մետալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԵՔ ԲՈՆՑՔԱՍԱՐՁԻԿՆԵՐ ՄՐՑԱՆԱԿԻՐ

Չեխիայում անցկացուած սիրողական բռնցքամարտի «Grand Prix»-ի 42-րդ խաղարկութիւնում Հայաստանը ներկայացրած չորս մարզիկներէից երեքը՝ Հրաչիկ Ջաւախեանը՝ 64 կգ, Արա Պուլուզեանը՝ 60 կգ եւ Տիգրան Արմենակեանը՝ 75 կգ, դարձել են պրոնզէ մրցանակակիր: Միայն 56 կգ քաշային Արամ Աւագեանն է անմասն մնացել պարզելից:

Յունիսի 16-26-ը Անքարա-

յում կայանալիք Եւրոպայի առաջնութեանը նախապատրաստող ազգային հաւաքականի մեր բռնցքամարտիկները միջազգային յաջող մեկնարկը կը լինի Երեւանում՝ ՀԱՕԿ-ի նախագահ Գագիկ Ծառուկեանի մրցանակների խաղարկութիւնում (Ապրիլի 11-17): Ըստ նախնական տուեալների, մրցումների կազմկոմիտէն մասնակցութեան յայտ ստացել է արդէն քսան երկրից:

ԱՅՆԹԱՊԻ ՀԵՐՈՍԱՍԱՐՏԻ 91-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ

Շաբաթը կազմակերպութեան վարչութիւնն ու օրուան յայտագրի բոլոր մասնակիցները, միաժամանակ ցանկութիւն յայտնեց միասին ըլլալ 2012ի Ապրիլի հանդիսութեան:

նուկեան: Գիրքը կը բովանդակէ հետաքրքրական յուշագատումներ, յօդուածներ եւ հեղինակի հասցէին ուղղուած գրութիւններ:

Սոյն տօնակատարութեան իրողոյսի գրութիւնը յղած էր (Հալէպէն) գրող Թորոս Թորանեանը գորկարդաց Ռաֆֆի Պալապանեանը:

Հանդիսութեան ընթացքին գործադրուեցաւ երաժշտական բարձրորակ յայտագիր մը, մասնակցութեամբ շնորհալի արուեստագէտներ Յակոբ Նազարեանի (Չուֆակ) եւ Քնարիկ Ներկարարեանի (մենները):

Այնթապցիներու Մշակութային Միութեան նախագահ՝ Երուանդ Պապայեան, թէեւ անձամբ ներկա էր սրահէն ներս սակայն՝ անհանգիստ զգալով, փակման խօսքը փոխանորդաբար կարդաց իր դուստրը՝ Դոկա. փրոֆ. Սիլվա Գարայեան: Ան սրտանց շնորհաւոր

րեց կազմակերպութեան վարչութիւնն ու օրուան յայտագրի բոլոր մասնակիցները, միաժամանակ ցանկութիւն յայտնեց միասին ըլլալ 2012ի Ապրիլի հանդիսութեան:

Արժ. Դոկա. Չաւէն. Ա. Քհնյ. Արզումանեան, նախքան իր փակման աղօթքը կատարելը ըսաւ թէ հիացած է այնթապցի երեք հոգեւորականներու վրայ, որոնք սերտօրէն առնչութիւն ունին հերոսամարտի պատմութեան հետ: Անոնք են Տիրան Արք. Ներսիսեան, Նուրայր Արք. Պողարեան եւ Ներսէս Ա. Քհնյ. Թաւուքեան:

Սոյն յիշատակելի եւ բարձրորակ տօնակատարութիւնը վերջ գտաւ Տէր Չաւէնի «Պահպանիչ» աղօթքով եւ Այնթապի ինքնապաշտպանութեան հերոսամարտի քայլերգով:

Պաշտօնակալն Բաժնի աւարտին տեղի ունեցաւ պատշաճ հիւրասիրութիւն եւ վերեւ յիշուած գիրքերու վաճառք:

ՊԵՅԼԱՆԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ

Շաբաթը կազմակերպութեան վարչութիւնն ու օրուան յայտագրի բոլոր մասնակիցները, միաժամանակ ցանկութիւն յայտնեց միասին ըլլալ 2012ի Ապրիլի հանդիսութեան:

ներու աշխատանքն ու անոնց հայրենանուէր գործունէութիւնը գնահատող ելոյթով մը հանդէս եկաւ Մէսիլ Քէչիշեան եւ յորդորեց նոր սերունդի հայեցի կրթութեան անհրաժեշտութիւնը:

Խօսք առնելով Յակոբ Ավրաեան պէլլանցիներուն ուշադրութեան յանձնեց Հայաստանի էջմիածնի շրջանի Ոսկեհատ գիւղի մէջ կանգնած Պէլլանի գեղեցիկ յուշարձանի այժմու անսխառնակ եւ լքեալ վիճակի մասին: Առանձնապէս նշեց որ յուշարձանի եւ անոր շրջապատի վերանորոգութիւնը անհրաժեշտութիւն մըն է եւ այդ նպատակին համար իր կողմէ նուիրեց հազար

տոլար: Իսկ նախատեսուած ընդհանուր ծախսն է շուրջ 6000 տոլար:

Կ'իմանանք թէ Ոսկեհատ գիւղի դպրոցի գրադարանը վերանորոգուած է Հայր. Միութեան ծախսով եւ կը կրէ Գրիգոր Տէօվլեթեանի անունը: Նոյնպէս վերջերս նորոգուած է Ոսկեհատի վարժարանի հանդիսարանը եւ պիտի կոչուի նորոգ հանգուցեալ Նուպար Միսիֆէրգեանի անունով:

Յերեկոյթի գեղարուեստական բաժնին իր մասնակցութիւնը բերաւ շնորհալի երգչուհի Սիւզի Մազմանեան:

Տեղի ունեցան նաեւ սրտաբուխ նուիրատուութիւններ Միութեան ֆոնդին եւ յուշարձանի վերանորոգութեան համար:

ԵՐՈՒՍԱՂԵՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԲՈՒԹԵԱՆ ՏԱՆԱՄԵԱՅ ԿՆՃՈՒՐ

Շաբաթը կազմակերպութեան վարչութիւնն ու օրուան յայտագրի բոլոր մասնակիցները, միաժամանակ ցանկութիւն յայտնեց միասին ըլլալ 2012ի Ապրիլի հանդիսութեան:

Պոլսոյ Պատրիարքութիւնը ջնջուած էր, թէեւ Օրմանեան ինք գնաց պատրիարքարան, տեսակցեցաւ Կաթողիկոսին հետ որ «սխալմունք մըն էր եղաւ», կ'ըսէր, ակնարկելով անտեսումին, որուն Օրմանեան կը պատասխանէր թէ իր մտահոգութիւնը Թուրքիոյ պարտադրած կանոնադրութիւնն էր որ կրնար մեծապէս վնասել հայ եկեղեցական իրաւունքներուն: Կաթողիկոսին շինծու պաշտօնը տեւեց 15 ամիս երբ 1917 Հոկտեմբերին Բրիտանական բանակը զբաղեց Պաղեստինը եւ Թուրք բանակը դէպի հիւսիս նահանջեց, իրեն հետ տանելով Երուսաղէմի հոգեւոր պետերը, ներառեալ Խաչապետան Կաթողիկոսը ու Օրմանեան Սրբազանը, որոնք ժամանակաւոր կերպով Դամասկոս պապստանեցան:

Եղիշէ Պատրիարք Դուրեան

Տանամեայ շփոթը խանգարած էր ամէն ինչ Սրբոց Յակոբեանց վանքէն ներս, եւ սակայն Երուսաղէմի աւանդական պաշտամունքները կը կատարուէին հոն մնացած մի քանի հոգեւորականներու կողմէ, որոնց մէջ էին Մկրտիչ Եպս. Աղանուհի, Եղիշէ Եպս. Զիրիկիլեան, Գիւտ Եպս. Միսիթարեան, Մեսրոպ Վրդ. Նշանեան, Սուրէն Վրդ. Քէմհաճեան որ 1918 թուին ձեռնադրուած էր Աղանուհի Սրբազանէն:

Կացութիւնը հիմնովին փոխուեցաւ երբ Կ. Պոլսոյ Կեդրոնը 1921 թուականին Երուսաղէմի Պատրիարք ընտրեց Կ. Պոլսոյ նախկին պատրիարք Եղիշէ Արքեպս. Դուրեանը որ բարեբախտաբար Կ. Պոլիս կը մնար՝ գերծ աքսորէ եւ հալածանքէ: Միաբանութիւնը նախ գինք միաբան ընտրելու համար յատուկ ժողով գումարեց, եւ ապա ինք Երուսաղէմ գնաց պարզ այցելութեան համար, եւ ամիսներ ետք միաբանութիւնը կատարեց Դուրեան Պատրիարքի ընտրութիւնը: Իր ընտրութեան նպաստեց իր Արմաշի բանիմաց աշակերտներէն

Թորգոմ Արքեպս. Գուշակեան որ 1918-ին Անգլիացոց հրաւերով Ջատիկի շաբթուն Եգիպտոսէն Երուսաղէմ մեկնած էր տօնակալ օրերու արարողութեանց նախագահելու:

Դուրեան Պատրիարք իր լիագոյն իմաստով փրկեց Երուսաղէմը, հոն «փոխադրելով» նահատակ Արմաշի Դպրեվանքը: Իր մօտ կանչեց Բաբգէն Եպս. Կիւլէսէրեան որ Ամբրիկա կը գտնուէր ու յանձնեց անոր ժառանգաւորաց վարժարանի եւ Ընծայարանի ուսուցչապետութիւնը: Նոր սերունդ մը յառաջ եկաւ Դուրեանի եւ Կիւլէսէրեանի շունչին տակ: Դուրեան Պատրիարք վախճանեցաւ 1930 թուին, եւ նոյն ատեն ալ Կիւլէսէրեան Անթիլիաս հրաւիրուեցաւ ձեռնուի Սահակ Բ Խաչապետան Կաթողիկոսին դառնալու համար իր Աթոռակից Կաթողիկոսը: Այդ տարիներուն Երուսաղէմ տուաւ իր լաւագոյն հունձքը Դուրեան Պատրիարքի ձեռնադրութեամբ հոյ մը հոգեւորականներ նուիրելով եկեղեցիին եւ ազգին: Իր շունչին տակ հասակ առած յաջորդ դասարանի վասպուրակաւի որբերէն ձեռնադրութիւն ստացան Տեղապահ Մեսրոպ Եպս. Նշանեանի ձեռնադր. Դուրեանի վախճանումէն անմիջապէս ետք:

Դուրեանի յաջորդեց իր արժանաւոր աշակերտը, Եգիպտոսայ թեմի ծանրախոհ, վարչագէտ եւ մտաւորական Առաջնորդ Թորգոմ Արքեպս. Գուշակեան որ գերազանցեց իր ուսուցչին սկսած գործը Հայ եկեղեցիին ընծայելով որակեալ հոյ մը հոգեւորականներ, միեւնոյն ատեն խմբագրելով Պատրիարքութեան ՍԻՈՆ ամսագիրը որ իր գրիչին տակ ապրեցաւ իր ոսկեղարը՝ 1931-էն 1939, երբ յանկարծակաւ կերպով վախճանեցաւ 65 տարեկանին: Երուսաղէմի տասնամեայ կնճիւղը պարտադրուեցաւ քաղաքական բարդ եւ բռնի ճնշումներու հետեւանքով, միաբանութիւնը երբեմն մնայով առանձինն, որ սակայն կրցաւ անհարկի փորձանքներէն դուրս գալ, շնորհիւ լուսամիտ պատրիարքներու առաջնորդութեան:

ԱՅՆԱՏՈՂ ԿՈՒՂՈՒԻ

Փաստօրինայի մէջ հայկական հաստատութիւն մը կարիքն ունի տնային պայմաններով՝ ՀԻՆԳ ԳԻՐՔԵՐ ՆՈՐՈԳՈՂԻ մը (վճարումի լաւ պայմաններ):

(626) 354-5924 (վահէ):

ArmenienInfo.net

News. Informationen. Kommentare.



Gene Masuda for City Council 2011 • 3010 San Pasqual St. • Pasadena, CA 91107
(626) 379-6549 • www.masudaforcouncil.com

Elect Gene Masuda!

Keep Our Neighborhoods Great!

ONE OF PASADENA'S LEADING NEIGHBORHOOD ADVOCATES!

Gene Masuda is one of East Pasadena's most experienced and active neighborhood advocates. He has lived in East Pasadena for 25 years. Married to his wife Joanne, Gene has been very active in protecting our neighborhoods and working to build consensus among neighborhoods for years. He serves as President of one of our District's largest Neighborhood Associations (Eaton Blanche).

As a business owner with a 30 year record of success, Gene will bring a clear, critical vision to our budget issues. Our City must be managed for the benefit of its residents, not City Hall insiders.

TALK IS CHEAP! GENE GETS THE JOB DONE!

Gene Masuda has:

- ✓ Successfully fought to keep the Edison right-of-way from being developed into storage units.
- ✓ Led the effort to combat our District's vandalism, drug trafficking and the crime and the violence associated with it.
- ✓ Organized and led District-wide meetings on traffic and earthquake safety.
- ✓ Organized community outreach for the General Plan update process.
- ✓ Established the Gene Masuda Educational Center at the Boys and Girls Clubs of Pasadena.

MASUDA

FOR CITY COUNCIL

KEEP OUR NEIGHBORHOODS GREAT!

On March 8, Elect Gene Masuda!



ԱՊՐԻԼ 19-ԻՆ ՁԵՐ ՉԱՅՆԸ ՏՈՒԷՔ ՀԱՅԱՍԷՐ ՃԻՆ ՄԱՍՈՒՏԱՅԻՆ

ԱՅՍՊԷՍ ԿԸ ԹԵԼԱԴԻԷ ՆԱԵԻ ՓԱՍՏԻՆԱՅԻ ՅԱՅՏՆԻ ԴԵՍՔԵՐԷՆ՝ ՔՐԻՍ ՇԱՀԻՆԵԱՆ

ԱՅՍՕՐ ԻՍԿ ՀԵՌԱՉԱՅՆԵՑԷՔ ՃԻՆ ՄԱՍՈՒՏԱՅԻՆ **(626) 379-6549**